Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային հսկողության սարքավորումների (կշեռք՝ դինամիկ, շարժական) ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04 ապրիլի 2023թ.
ժամը 14:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ Հուսիկ Մարտիրոսյանը, անդամներ՝ Մարտին Սիմոնյանը, Արթուր Գրիգորյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ղեկավար Հուսիկ Մարտիրոսյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը

Հ/Հ	Մասնակցի անվանումը	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ առանց ԱԱՀ / ՀՀ դրամ /	Պլանավորված գին /ՀՀ դրամ /
1	Էդեսսա ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	39600000	48000000

Հանձնաժողովը ուսումնասիրելով «Էդեսսա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, պարզեց, որ այն չի համապատասխանում հրավերի պահանջներին մասնավորապես մասնակցի կողմից չի ներկայացվել հայտի ապահովում:

Համաձայն հրավերի 7 6 կետի Մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե դրանում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց

- Էդեսսա ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

-Հաշվի առնելով, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ու վերջինիս հայտը մերժվել է՝ ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

ղեկավար _____ Հուսիկ Մարտիրոսյան

անդամներ _____ Մարտին Սիմոնյան

_____ Արթուր Գրիգորյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան